



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Տ. Օ. ՄԱՐՄԻՆԻ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ԱՃՈՒՄԻՆ ՄԷՋ ՏԱՆ ԵՒ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ԴԵՐԸ՝ ԼՈՒՄԱՐՁԱԿԻ ՏԱԿ

Հայ Տունը ի՞նչ դեր ունի հայ մանուկի կազմաւորման ու առողջ աճումին մէջ. ծնողք ու ընտանեկան հարազատներ ինչպիսի՞ ազդեցութիւններ կրնան ունենալ ու պէ՛տք է ունենան այս իրագործումին մէջ: Ինչպէ՞ս պէտք է վերաբերիլ մանուկներուն հետ, երբ անոնք ճիշդ կամ սխալ ընթացքի մէջ են...

Այս ու նմանօրինակ հարցեր ու մտահոգութիւններ խորհրդածութեան եւ միացեալ քննարկումի նիւթ եղան Հինգշաբթի, 14 Ապրիլի կէսօրին, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի կազմակերպած դասախօսական ճաշկերոյթի պահուն, «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ: Ձեռնարկը մաս կը կազմէր այն ծրագիրներուն, որոնք նուիրուած են Հայ Մանուկի Տարուան:

Ճաշի հանդիպումը տեղի ունեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութեամբ ու ներկայութեամբ: Ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան, եկեղեցիներու տիկնանց միութեանց անդամներ ու Ազգ. Առաջնորդարանի բարերարներ:

Հանդիպումի բացման խօսքը արտասանեց Տիկնանց Օժանդակ Մարմինի ատենադպիր Տիկին Վարդուկ Աւետիքեան, որ նաեւ օրուան հանդիսավարն էր: Ան ողջունեց ներկաները եւ հակիրճ բացատրութիւն տուաւ այս ու նմանօրինակ հանդիպումներու նպատակին մասին, նշելով, որ ճաշէն ետք, դասախօսելու հրաւիրուած է ընտանեկան ու ամուսնական հարցերու մասնագետ Տիկին Նորա Շիրիլեան ԹԷԼԷԷԿԵԱՆ, նիւթ ունենալով «Հայ Չաւակը Տունէն ներս, Ծնողքին դերը»:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը: Մատուցուած ճաշերը, որոնք յատուկ էին մեծ պահոց շրջանի, պատրաստուած էին Տ. Օ. Մարմինին կողմէ եւ արժանացան մասնակիցներու գնահատանքին:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Տիկին Նորա Շիրիլեան Քելեշեան դասախօսութեան սիւթը պատրաստած էր յստակ ենթաբաժանումներով ու ներկայացուց հաղորդական եւ ներգրաւող կերպով, մերթ ընդ մերթ հարցումներ ուղղելով ներկաներուն ու համապատասխան արձագանգներ գտնելով: Ան անդրադարձաւ Ս. Գրային այն խօսքին, թէ մանուկը պէտք է կրթել անոր ճամբու սկզբնաւորութեան, որպէսզի երբ մեծնայ, անկէ չխոտորի, ապա յաջորդաբար անդրադարձաւ մանուկը շրջապատող պայմաններուն ու անոր վրայ ազդեցութիւն ունեցող գործօններուն, ինչպիսիք են՝ տիպարներ, անմիջական հարազատներ, դպրոցն ու ընկերները, մէկ խօսքով՝ մանուկին աշխարհը կազմող տարրերը: Ան շեշտեց, որ մանուկի դաստիարակութեան առաջին ու հիմնական միջավայրը տունն է, դպրոցէն, եկեղեցիէն, միութենական միջավայրէն առաջ: Մանուկը տան մէջ, ծնողներէն ու իրեն գուրգուրանք տրամադրող անհատներէն է որ կը կրէ իր առաջին ազդեցութիւնները եւ բնական ընթացքով կը հետեւի անոնց վարմունքին, այլոց հանդէպ վերաբերմունքին: Յետեւաբար, կենսական է, որ ծնողներ ու հարազատներ հասկացողութիւն ցուցաբերեն մանուկի պահանջներուն, արարքներուն ու անոնց տուն տուող պատճառներուն նկատմամբ, խուսափին ցուցամոլութենէ եւ մանուկը մրցակցական անհարկի բաղդատութիւններու մղելէ, ու տակաւին, պէտք է անոր տրամադրել իմաստալից ժամանակ, ոչ թէ, օրինակի համար, զայն թողուլ պատկերասփիւռի »խնամքին«:

Յարգելի դասախօսը անդրադարձաւ նաեւ այլ մշակոյթներու ազդեցութեան գործօնին, իբրեւ բնական հետեւանք՝ մանուկին ապրած միջավայրերուն: Այնուհետեւ, ան վեր առաւ երեց սերունդի նպաստին կարելորութիւնը, ու վերջապէս, ծնողներուն ու ընտանիքի անդամներուն անհատական վարմունքի դերը՝ մանուկի կազմաւորման ու դրական աճումին մէջ: Ան մէկէ աւելի հանգրուաններու վեր առաւ հայկական ժառանգութեանց մանուկներուն փոխանցման ու անոնց էութեան ներարկումի միջոցները:

Դասախօսութեան աւարտին, Տիկին Ն. Քելեշեան պատասխանեց նաեւ ներկաներու հարցումներուն: Նկատի ունենալով, որ ան հիմնադիրներէն է Օթիզմով տառապող մանուկներու հայկական կեդրոնին, ան թելադրեց, որ նման վիճակ նկատելու պարագային, անհրաժեշտ է, որ մանուկին մասնագիտական հոգածութիւն տրամադրուի կարելի ամենէն կանուխ հանգրուանին:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Հանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատանք արձանագրեց դասախօսին, որ սիւթը ներկայացուցած էր մասնագիտական բայց նաեւ մատչելի ու հաղորդական ձեւով, մատնացոյց ընելով մտահոգութիւններ ու լուծումի ձեւեր:

Առաջնորդ Սրբազանը յիշեցում կատարեց, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, 2011ը Հայ Մանուկի Տարի հռչակող իր պատգամին մէջ անդրադարձած էր այն նախադրեալներուն, որոնք պէտք է տրամադրել Հայ Մանուկին առողջ դաստիարակութեան ու հայեցի աճումին

համար: Առաջնորդ Սրբազանը յիշեցում կատարեց Ս. Գրային այն համարին, որ կ'ըսէ. «Ձեր գանձերը ուր որ են, ձեր սիրտը հոն է»: Այս մօտեցումով ալ, ան թելադրեց սիրտերը չկապել նիւթական արժէքներու, այլ առաջնահերթ գանձ նկատել մանուկները, արժանի հոգածութիւնը տրամադրել անոնց ֆիզիքական, հոգեկան եւ մտաւոր աճումին, հոգալ անոնց հոգեւոր դաստիարակութիւնը, որովհետեւ մանուկներուն հոգեւոր ինքնամբը միայն հոգեւորականներուն եւ եկեղեցւոյ պարտականութիւնը չէ, այլ նաեւ ծնողներուն եւ հարազատներուն: Առաջնորդ Սրբազանը եւս վեր առաւ մանուկի դաստիարակութեան մէջ տան հիմնական դերը եւ յիշեցուց, որ այսօր, երբ ծնողներ ունին անելի բարձր ուսում եւ կարողութիւններ, պէտք է այդ բոլորը ի սպաս դնել մեր նորահաս սերունդներուն: Ան իր խօսքը եզրափակեց ողջունելով ներկաները, գնահատանք արձանագրելով Տ. Օ. Մարմինին ու բարեմադրութիւններ ուղղեց Ս. Յարութեան տօնին առիթով:

"YEAR OF THE ARMENIAN CHILD" SECOND LITERARY LUNCHEON HELD AT THE PRELACY

The Prelacy Ladies Auxiliary has organized a series of literary luncheons in celebration of the "Year of the Armenian Child".

The second in the series was held on Thursday, April 14th at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.

The luncheon was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Among the guests in attendance were Executive Council Chair Mrs. Rima Boghossian, Prelacy sponsors, and Ladies Auxiliary members of Prelacy parishes.

The event began with the blessing of the tables by the Prelate. After lunch, Prelacy Ladies Auxiliary Secretary and Master of Ceremonies Mrs. Vartoug Avedikian welcomed the guests and introduced the day's keynote speaker, Marriage and Family Counselor Mrs. Nora Chitilian-Keleshian who would be speaking on the subject, "The Armenian Child: the Parent's Role Within the Home".

Mrs. Keleshian began her lecture with the passage from the Bible that "train a child in the way he should go, and when he is old he will not depart from it". She subsequently reflected on the various surroundings and influences of children such as role models, relatives, school, and friends, in other words, building blocks in a child's life. She stressed that of these, the most important factor in a child's life is the family, then church, school, and community. A child's first influence comes from the parents, therefore, it is absolutely crucial that parents recognize a child's individual needs and devote the time and energy to ensure that their children receive the necessary nurturing and care and are instilled with the right values.

Mrs. Keleshian also reflected on the social surroundings of children and the influences that children are subjected to outside the home, stating that elders in the community also play an important role in their upbringing. On more than one occasion, the keynote speaker highlighted the importance of not

just teaching our children about our national traditions and culture, but making sure that our heritage becomes a part of their identity. Given that Mrs. Keleshian is also one of the founders of the Armenian Autism Outreach Project, she concluded her lecture by urging the guests that if a child exhibits atypical behaviors, it is crucial that they receive the necessary help as early as possible. The lecture concluded with a question and answer session.

The Prelate was then invited to deliver his closing remarks. He first commended Mrs. Keleshian for a lecture that was highly informative and for her delivery which was highly engaging and enjoyable.

He reminded the guest that in the "Year of the Armenian Child", proclamation, H.H. Catholicos Aram I has highlighted the foundations which children need for their proper upbringing and development as good individuals and Armenians. Citing the passage from the Scriptures that says, "Where you treasure is, there your heart will be also", the Prelate stressed that children, and not material goods, are the treasures of our hearts and parents must devote utmost efforts to their physical, spiritual, and intellectual development. He went on to say that the spiritual nourishment of our children is not just the responsibility of clergy and church, but also of parents and family members. The Prelate reaffirmed the message of the keynote speaker, that parents have the ultimate role in their children's lives, and noted that in today's world where parents have higher education and understanding, they must devote any and all possible resources for their children's futures. He concluded by commending the Ladies Auxiliary for organizing this and similar beneficial events, and conveyed his well wishes to all as we prepare to celebrate Easter.